3
887

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ. ՄԻԱՑԵՔ!

...БЛИОТЕКА ТССР
ИНВ. № 887 3
352(47С)

# ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՅԵՎ ՀԱՇՎԵՏՈՒ-ՎԵՐԸՆՏՐԱԿԱՆ ԿԱՄՊԱՆԻԱՅԻ ՄԱՍԻՆ

352
Խ-84

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ ԱԴՐԿԵՆՏԳՈՐԾԿՈՄԻ
ԲԱՔՈՒ — 1934

Թարգմանեց Կ ԶԱԼԱԲԻ  Տեխ՝ խմբագիր Կ. ԹԱՌԼԱՆՅԱՆ

Главлит № 8193 Заказ № 4428 Тираж 500 экз. Тип. „III Интернационал
Бакполиграфа БМП Баку ул. Саратовца-Ефимова 29

352
Խ-34

01 MAR 2010

Ընտրական հանձնաժողովներին, գյուղական խորհուրդներին, շրջգործկոմներին, նախագահություններին, ՆախՍԽՀ Կենտգործկոմի, Ի. Լ. Ղ. մարզգործկոմի, Բագխորհրդի նախագահություններին, Գյանջայի յեվ Նուխու քաղխորհուրդներին յեվ բոլոր ժողկոմատներին:

ԹԱՆԿԱԳԻՆ ԸՆԿԵՐՆԵՐ.

*Խորհուրդները — դա պրոլետարիատի մասսայական կազմակերպություններից ամենահամապարփակն է: Խորհուրդներում բանվոր դասակարգը, կոլտնտեսականներն ու բոլոր աշխատավորներն անմիջական մասնակցություն են ունենում պրոլետարական պետության կառավարման գործում: Խորհուրդների միջոցով իրականացվում է բանվոր դասակարգի ղեկավար դերը՝ սոցշինարարության գործում:*

*Խորհուրդների հաշվետու — վերընտրական կամպանիան — կարևորագույն մասսայական քաղաքական կամպանիա յե: Նա անցնում է սոցիալիստական սիստեմի հաղթական նվաճումների պայմաններում:*

*Վերջին վերընտրությունների ժամանակից, չնայած դասակարգային թշնամիների կատաղի դիմադրությանը, ԽՍՀՄ բանվոր դասակարգը, կոմունիստական կուսակցության և մեծ Ստալինի ղեկավարությամբ, ձեռք է բերել մեծագույն, համաշխարհային — պատմական նշանակություն ունեցող հաղթանակներ: Կառուցված է սոցիալիստական էկոնոմիկայի հիմքը, ջախջախված է վերջին կապիտալիստական դասակարգ — կուլակությունը, սոցիալիստական յեղանակը հանդիսանում է անբաժանելի իշխող և միակ հրամանատարական ուժը՝ ԽՍՀՄ ամբողջ ժողովրդական տնտեսության մեջ: Մեր սոցիալիստական հայրենիքը — ԽՍՀՄ այդ կարճ ժամանակամիջոցում հետամնաց, ագրարային յերկրից կերպարանափոխվեց առաջավոր, ինդուստրիալ յերկրի, խոշոր կոլեկտիվ մեքենայացված գյուղական տնտեսության և առաջավոր կուլտուրայի յերկրի, ուր, ի տարբերություն կապիտալիստական աշխարհից, չկա գործազրկություն և մասսաների աղքատացում, ուր որեցոր բանվորներն ու կոլտնտեսականներն ավելի ու ավելի յեն դառնում «մարդիկ, վորոնք վարում են ունևոր և լիովին կուլտուրական կյանք»:*

*Անդրկովկասի ազգային հանրապետությունների յեղբայրական ընտանիքում, ԽՍՀՄ-ի հետ միասին, խոշոր տնտեսական և կուլտուրական աճ ունի և Անդրֆեդերացիայի ու ԽՍՀՄ-ի*

13.05.2013
39.754

անբաժանելի մասը — Խորհրդային Ադրբեջանը, վորը շնորհիվ լենինյան — ստալինյան ազգային քաղաքականության, որինակելի սոցիալիստական հանրապետություն է դառնում Մերձավոր Արևելքի շեմքին:

Վերընտրական կամպանիան — սոցիալիստական շինարարության հաղթանակների լայնածավալ զորատես է: Խորհուրդների առաջիկա հաշվետու — վերընտրական կամպանիան պետք է մեծագույն չափով օգտագործվի մեր նվաճումների մասսայական ժողովրդականացումը, լայն կերպով բացատրելով և ուժեղացնելով մեր կուսակցության և կառավարության միջոցառումները կյանքի մեջ մացնելը: Այդ կամպանիան պետք է տարվի բանվորների ու կոլտնտեսականների լայն մասսաներին եվ լենինյան Համկոմկուսի (բ) Կենտկոմի, Անդրերկոմի (բ), Ադրկոմկուսի (բ) Կենտկոմի և Բաքվի Կոմիտեյի շուրջն ավելի համախմբելու նշանաբանի տակ, խորհուրդների հետագա ամրապընդման, վճռականորեն նրանց դասակարգայնորեն — խորթ, թշնամական, այլասերված տարրերից մաքրելու նշանաբանի տակ, 19 միլիոն տոնն նավթի և 142 հազար տոնն բամբակի համար պայքարելու նշանաբանի տակ, բոլշևիկյան կոլտնտեսությունների և ունևոր կոլտնտեսականի, անասնապահության աճի և զարգացման նշանաբանի տակ, անճանապարհության, տրանսպորտի ամրապնդման, և ժողովրդա — տնտեսական մյուս խնդիրների իրագործման նշանաբանի տակ, Անդրֆեդերացիայի — ԽՍՀՄ մարգարիտի — եվ ավելի ամրապնդելու նշանաբանի տակ: Խորհուրդները պետք է եվ ավելի բարձր պահեն պրոլետարական ինտերնացիոնալիզմի դրոշակը, ուժեղացնելով աշխատավորների ինտերնացիոնալիստական դաստիարակման գործը, անհաշտ պայքար մղելով մեծապետական շովինիզմի ու տեղական նացիոնալիզմի դեմ:

Խորհուրդների առաջ կանգնած տնտեսական և կուլտուրական խնդիրները — հսկայական են: Խորհուրդները պետք է գլխավորեն աճող ենտուզիազմը, վճռականորեն արմատախիլ անելով բյուրոկրատական խեղաթյուրումները, չինովնիկական անհոգի մոտեցումը և անզգայությունը՝ դեպի աշխատավորության կարիքներն ու պահանջները: Նրանք պետք է կազմակերպեն կադրերի լավագույն ընտրությունը, կոնկրետ ղեկավարություն, կատարածի ստուգումն ամբողջ տնտեսության և կուլտուրական շինարարության մեջ:

Արդյունաբերության, գյուղական տնտեսության և տրանսպորտի տեխնիկական վերակառուցումը հանդիսանում է տնտեսական խնդիր, վորը կանգնած է խորհուրդների առաջ յերկրորդ հնգամյակում: Այդ խնդիրների լուծումը անկարելի յե, առանց վորակական ցուցանիշների բարձրացման և աշխատանքի արտադրականության հետագա բարձրացմամբ, առանց տիրապետելու տեխնիկային և նոր արտադրությունների յուրացման, առանց աշխդիսցիպլինայի բարձրացման:

Գյուղական խորհուրդների առաջ հատկապես սուր է կանգնած կոլտնտեսությունների ու խորհտնտեսությունների կազմակերպչա — տնտեսական ամրապնդումը և կոլեկտիվացման հետագա ծավալումը: Գյուղխորհուրդները պետք է կոլտնտեսային կարգի համար տարվող իրենց աշխատանքի ամենօրյա պայքարի ուշադրության կենտրոնում դնեն կոլտնտեսականին, նրա ոգնությունը, ներգրավեն մենատնտեսներին կոլտնտեսային շարժման մեջ, գործնականի մեջ ցույց տալով նրանց կոլտնտեսային կյանքի առավելությունները:

Ադրբեջանի խորհուրդները պետք է պայքարեն բամբակաքաղի ուժեղացման համար, վերջ տան տեղի ունեցող հետ մնալու դեմ, կազմակերպեն բոլոր աշխատունակներին բամբակաքաղի դուրս գալու և 1935 թ. բամբակային կամպանիային նախապատրաստվելու համար, պայքար ծավալեն աշնանավարն ավարտելու և մերձարևադարձային և ցիտրուսային կուլտուրաների զարգացման համար: Խորհուրդները պետք է ջախջախիչ հարված տան կուլակային այն թեորիային, վոր բամբակի քաղելը — դա միայն կանանց գործն է: Խորհուրդները միաժամանակ պետք է ամեն որ հոգ տանեն կոլտնտեսային անասունների՝ ձմեռվա համար կերերով ու շենքերով ապահոված լինելու մասին:

Խորհուրդների առաջ մեծագույն խնդիրներ են կանգնած աշխատավոր մասսաների նյութական — կուլտուրական մակարդակի բարձրացման համար: Քաղաքների հետագա կոմունալ բարեշինության ծավալումը, բանավանների ու շրջանային կենտրոնների բարեշինությունը, դպրոցների, հիվանդանոցների, մանկապարտեզների շինարարությունը, բնակարանային և ճանապարհային շինարարության ծավալումը, հասարակական սննդի, կուլտուրական խորհրդային առևտրի մասին հոգ տանելու համար — այդ բոլորը պետք է հանդիսանա մարտական ծրագիր խորհուրդների աշխատանքում:

Սոցիալիստական սեփականությունը — մեր կարգերի հիմքն է: Քաղաքների ու գյուղերի խորհուրդները, համառ պայքար տանելով սոցիալիստական սեփականության ընդլայնման և ամրապնդման համար, պետք է հատուկ խստությամբ պատժեն ժողովրդական բարիքի հափշտակիչներին, խորհրդային որենքների խախտողներին, բոլոր նրանց, ով յելույթ է ունենում խորհրդային պետության և նրա շահերի դեմ:

Խորհուրդները — աշխատավոր մասսաների պահակն—պետք


Гос библиотека
ՀՍՍՌ — Арм ССР
Ալ. Մյասնիկյանի անվան
42701.63

է որ ավելի ամրապնդեն սոցիալիստական օրինականությունը, պարտավոր են խիստ կերպով պահպանել բանվորների, կոլտնտեսականների և խորհրդային ինտելիգենցիայի իրավունքները, թույլ չտան հակաօրինական վարչարարություն և լայն մասսաների մեջ արմատացնելով սոցիալիստական իրավագիտակցություն:

Խորհրդային կառավարության խաղաղ քաղաքականությունը ընդունվում և աջակցություն է գտնում խաղաղության բոլոր բարեկամների կողմից, նույնիսկ խորհրդային սահմաններից դուրս: Բայց դեռևս շարունակում են գործել մեզ թշնամի ուժեր, որոնք ձգտում են դեպի նոր պատերազմներ և սպառնում են խորհուրդների յերկրին: Ահա թե ինչու խորհուրդների առաջ կանգնած է խնդիր — բոլոր ուժերով ամրացնել մեր մեծ հայրենիքի պաշտպանունակությունը, զգայուն և ուշադրությամբ հոգ տանել Կարմիր բանակի մարտիկների և նրանց ընտանիքների մասին:

Հաշվետու — վերընտրական կամպանիայի նախապատրաստման ու անցկացնելու հետ պետք է կապակցված լինի և խորհուրդների ու գործկոմների աշխատանքների վերակառուցումը· — սեկցիաների և պատգամավորների խմբակների ընդլայնումը, խորհուրդների աշխատանքում և նրանց մասսայական կազմակերպություններում — կին — ակտիվիստներին, բանվորուհիներին ու կոլտնտեսուհիներին ներգրավելը, բանվորների շեֆություն վերցնելը պետապարատի վրա, կատարածի ստուգման ուժեղացումը և այլն: Այդ ամենը պետք է իրագործվի 17-րդ կուսհամագումարի պատմական որոշումների — մեր գործողությունների մարտական ծրագրի իրագործման հիման վրա:

Ինչ պետք է անել խորհուրդների հաշվետու — վերընտրական կամպանիայի հաջող անցկացման համար. դրա համար անհրաժեշտ է բացառապես լուրջ վերաբերվել դեպի նախապատրաստական աշխատանքները, լսել բոլոր պատվիրակների հաշվետվությունները, կազմակերպչորեն և քաղաքականապես ընդգրկել բոլոր աշխատավորներին այնպես, որպեսզի ապահովել ընտրողների 100-տոկոսային ներկայությունը՝ հաշվետու վերընտրական ժողովներին, խորհուրդների հաշվետվությունների շուրջը ծավալել լայն բոլշևիկյան ինքնաքննադատություն, մանրամասն կերպով և բազմակողմանիորեն քննարկել նակազները: Հաշվետու — վերընտրական կամպանիայի մեջ պետք է ներգրավել բոլոր ազգությունների աշխատավորներին — հայերին, թալիշներին, թաթերին, լեզգիններին, ավարցիներին, քրդերին, լեռնային հրեաներին, ռուսներին, թաթարներին և ուրիշներին պետք է ընդգրկվեն խորհուրդների հաշվետվություններով և վերընտրություններով իրենց մայրենի հասկանալի լեզվով:



Պայքարելով խորհուրդների ամրապնդման համար, խորհրդային Ադրբեջանի բանվոր դասակարգը և աշխատավորությունը խոշոր հաջողություններ են ձեռք բերել: Ներկա վերընտրություններում մենք պետք է աշխատենք էլ ավելի ամրապնդել պրոլետարական դիկտատուրայի օրգանները — խորհուրդները: Ընտրությունների հաշվեհարդարում Ադրբեջանի խորհուրդները պետք է հագեցված լինեն բանվոր դասակարգի, աշխատավոր գյուղացիության, կարմիր բանակայինների, հրամանատարների, քաղաշխատավորների ու խորհրդային մասնագետների լավագույն ներկայացուցիչներով — մարդիկ, որոնք նվիրված են մեր մեծ հայրենիքին ու նրա սոցիալիստական շինարարությանը, որոնք ընդունակ են բոլշևիկորեն պայքարելու նավթի, բամբակի և ժողովրդա — տնտեսական մյուս խնդիրների պլանների կատարման համար, լավագույն հարվածայիններ — ենտուզիաստների, նավթահանքերի, գործարանների, ֆաբրիկաների, տրանսպորտի և կոլտնտեսային դաշտերի ականավոր մարդկանց, որոնք արդարացրել են կուսակցության և կառավարության վստահությունը — ահա թե որոնցից պետք է ընտրենք խորհուրդները:

Մենք անհրաժեշտ ենք գտնում այստեղ հատկապես կանգ առնել հետևյալի վրա: Անցյալ վերընտրություններում մի շարք շրջաններ մեծ թերագնահատությամբ վերաբերվեցին կանանց խորհուրդների մեջ ներգրավելուն և նրանց խորհրդային ղեկավար օրգաններում ընտրելու գործին: Այդ հետամնաց, հակապրոլետարական տրամադրության հետ պետք է խիստ վճռական պայքար տանել: Ներկա վերընտրություններում վճռական շրջադարձ պետք է առաջ բերել՝ կանանց խորհուրդների, գործկոմների և նրանց մեջ ղեկավար աշխատանքների ընտրելու վերաբերմամբ: Արդյունաբերության և գյուղական տնտեսության մեջ մենք խոշոր քանակությամբ կին-հարվածայիններ, կազմակերպիչներ, բրիգադիրներ, ինժեներներ, ագրոնոմներ, բժիշկներ և ուր. ունենք: Կոլտնտեսուհիներն այս տարվա ընթացքում բավականին քաղաքականապես և կուլտուրապես աճեցին և նրանց միջից առաջ է յեկել լայն ակտիվ: Ահա հենց այդ ակտիվը պետք է գնա խորհուրդները լրացնելու և ամրապնդելու:

Պետք է նույնպես խնամքով կազմակերպել հաշվետու — վերընտրական կամպանիայում յերիտասարդության ներգրավելու և մասնակցելու գործը, ավելացնելով լավագույն կոմյերիտականների, հարվածայինների և կոլտնտեսականների՝ յերիտասարդ բանվորներից՝ նոր խորհուրդների կազմի մեջ:

Թեկնածուների նախապատրաստությունը և ընտրությունները — կամպանիայի պատասխանատու մոմենտն է: Դրա մեջ

հաղթություն ունենալու համար նախ և առաջ պետք է բարձրացնել մասսաների լայն կազմակերպման վորակը, ուժեղացնել հեղափոխական – դասակարգային զգոնությունն ու անհաշտությունը, վճռականապես մաքրել խորհուրդները բոլոր խորթ, դասակարգայնորեն — թշնամի, անբարեհույս տարրերից: Ջախջախված կապիտալիստական վերջին դասակարգի — կուլակության մնացորդները, խորթ տարրերը, վորոնք սողոսկել են խորհտնտեսություններում, տրանսպորտում, կոլտնտեսություններում աշխատելու, նախկին մանրավաճառները, մոլլաները, հակահեղափոխական կուսակցությունների — մուսավաթիստների, դաշնակների, մենշևիկների, էս-էռների պոչերը և նրանց կամակատարները, սպեկուլյացիա անելով մեր աճի առանձին դժվարությունների վրա, կփորձեն «արդար, համարյա սուրբի» դիմակի տակ ներս խցկվել խորհուրդները, կամ օգտագործելով իրենց ազգակցական հարաբերությունները, խորհուրդների մեջ ներս խցկեն իրենց համախոհներին: Նրանք կփորձեն դժվարեցնել ու կազմալուծել խորհուրդների, կոլտնտեսությունների աշխատանքները: Այստեղից խնդիր է յելնում — համարձակ կերպով մերկացնել և ցույց տալ նրանց դասակարգայնորեն թշնամի դեմքն աշխատավորների լայն մասսաներին, վորպեսզի այդ օրինակի վրա էլ ավելի կոփել բոլոր աշխատավորների դասակարգային զգոնությունը: Այստեղից խնդիր է յելնում — վերընտրական կամպանիայում մասնակցելուց հեռացնել՝ նրա բոլոր շրջաններում — բոլոր նրանց, ով ընտրական օրենքով յենթակա յե ընտրական իրավունքներից զրկվելու: Բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիության թշնամիների բանսարկություններին պետք է հակադրվի բանվոր դասակարգի, կոլտնտեսական գյուղացիության և բանվոր աշխատավորության ամուր, կազմակերպված համախմբվածությունը:

Ընկերներ, մեր յերկրի լավագույն հարվածայինները—Մոսկվայի գործարանների բանվորները լծվել են խորհուրդների 7-րդ համագումարի անվան արտադրական արշավի: Նրանց կոչն արդեն լայն արձագանք է գտել Խորհրդային Ադրբեջանի աշխատավորների մոտ: Այդ արտադրական արշավում արտահայտվում է ձգտում՝ արտադրական առաջադրությունները կատարելու, ցույց տալ, վոր բանվոր դասակարգը և յերկրի բոլոր աշխատավորությունը, ինչպես յերբեք, ամուր համախմբված են խորհուրդների դրոշակի տակ, վորը ղեկավարում է Լենին-Ստալինի բոլշևիկյան մեծ կուսակցությունը:

Ադրբեջանի, Բաքվի խորհուրդներ, դուք պետք է բարձրացնեք ու գլխավորեք սոցմրցման և հարվածայնության նոր ալիքը և անձնվիրաբար պայքարել նրա համար, վորպեսզի, ձեր ձեռնարկները, կոլտնտեսությունները, ՄՏԿ շրջաններն արտա-



դրական առաջադրությունների կատարելով առաջին տեղը գրավեն և հենց դրանով ռապորտ տալու իրավունք ստանալ՝ Ադրբեջանի, Անդրկովկասի և Համամիութենական խորհուրդների համագումարին՝ յերկրորդ հնգամյակի յերկրորդ տարվա խնդիրների փայլուն կատարման մասին:

Ընտրական կամպանիայի հետևանքով խորհուրդները պետք է էլ ավելի ամրապնդվեն և էլ ավելի պիտի բարձրանա նրանց դերը՝ յերկրորդ հնգամյակի պատմական խնդիրների լուծման և մեր սոցիալիստական մեծ հայրենիքի պաշտպանունակության ամրապնդման գործում:

Հառաջ, սոցշինարարության տնտեսական – քաղաքական խնդիրների կատարման համար:

Ադրբեջանի Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի նախագահ՝
Մ. ԵՖԵՆԴԻՅԵՎ

Ադրբեջանի Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի քարտուղար՝
ՇԱՄՍԱԴԻՆՍԿԻ

## ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՈՒ-ՎԵՐԸՆՏՐԱԿԱՆ ԿԱՄՊԱՆԻԱՅԻ ՀԱՋՈՂ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ, ԱԴՐԿԵՆՏԳՈՐԾԿՈՄԻՆ ԿԻՑ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԿԱՐԳՈՎ, Ի ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ Ե ԱՌԱՋԱՐԿՈՒՄ ԿԱՄՊԱՆԻԱՅԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՅԵՎ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՀԵՏԵՎՅԱԼ ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐԸ

### ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

Ընտրական հրահանգի համաձայն, ընտրական հանձնաժողովները կազմակերպվում են, խորհուրդների՝ հատկապես վերընտրական կամպանիայի հարցերին նվիրված պլենումների ընդլայնված նիստերում։ Կոլտնտեսությունները, Ադրլենկոմյերիտմիությունը և առհասարակ այն բոլոր կազմակերպությունները, վորոնց ներկայացուցիչները մտնում են ընտրական հանձնաժողովների մեջ, այդ ներկայացուցիչների թեկնածությունները քննարկում են նախապես իրենց նիստերում։ Նախորոք, վստահ կերպով կարելի յե ասել, վոր դասակարգային թշնամին կարող ե սողոսկել ընտրական հանձնաժողովի մեջ, ինչպես այդ տեղի ունեցավ անցյալ կամպանիայում։ Պետք ե վճռականապես աշխատել, վորպեսզի ընտրական հանձնաժողովի մեջ ներս չնկնեն դասակարգայնորեն — խորթ, թշնամի և անբարեհույս տարրերը։ Պետք ե վճռականապես հաջողեցնել, վորպեսզի ընտրական հանձնաժողովներում ընտրվեն քաղաքականապես պատրաստված, դասակարգայնորեն — տոկուն, հեղինակավոր և աշխատանքի ընդունակ բանվորները, կոլտնտեսականներն ու խորհրդային իշխանությանն անձնվեր աշխատավորությունը — հասարակական գործիչները, գյուղի ակտիվիստները։

Ինչպես պարտադիր, մինչև ընտրական հանձնաժողովի թեկնածուների քննությունն ու հաստատելը, վերջինները անհատապես քննարկվում են ու վերամշակվում հատկապես վերընտրական կամպանիայի հարցերի նվիրված կոլտնտեսությունների ժողովներում։

Ընտրական հանձնաժողովները ընտրական կամպանիայի ընթացքում չափազանց կարևոր նշանակություն ունեն։ Նրանց վրա յե դրվում ձայնատուների ցուցակների կազմելը, այդ ցու-



ցակների մեջ սխալմամբ մտցվելու դեմ բողոքների քննությունը, ընտրական ժողովների անցկացնելը և այլն։ Ընտրական հանձնաժողովների վրա, առաջին հերթին, պատասխանատվություն ե դրվում, թույլ չտալ, դասակարգայնորեն — խորթ տարրերը ընտրություններին, վորոնք, անկասկած, ինչպես անցյալում, կաշխատեն ներս խծկվել աշխատավորների շարքերը և նրանց մեջ իրենց քայքայիչ աշխատանքը տանեն։

Ընտրական հանձնաժողովի բոլոր անդամները պետք ե խընամքով ուսումնասիրեն ընտրությունների վերաբերյալ հրահանգը և հնարավոր տեղեկանք տալու համար խորհրդին կից սահմանեն մշտական հերթապահություն։

### ՁԱՅՆԱԶՈՒՐԿՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՆԵՐ ԿԱԶՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

Շրջանային կարճատև (հրահանգչական խորհրդակցություններ կազմակերպելուց և անցկացնելուց իսկույն հետո, գյուղական ընտրական հանձնաժողովները, ղեկավարվելով ընտրական հրահանգով, ձեռնարկում են ընտրողների և ձայնազուրկների ցուցակների կազմելուն։

Ձայնազուրկների ցուցակը կազմելուց հետո ներկայացվում ե գյուղական ընտրական հանձնաժողովի կողմից շրջանային ընտրական հանձնաժողովի միջոցով շրջգործկոմին (շրջխորհուրդ, քաղխորհուրդ) և վերջինիս հաստատելուց հետո, կախվում ե բոլոր գյուղերում աչքի ընկնող տեղերում։ Ձայնազուրկների անուն և ազգանունները ընտրական հանձնաժողովները պետք ե մտցնեն պատի թերթում դրա համար հատուկ նշանակված տեղը։ Խստիվ կերպով ղեկավարվելով ընտրական հրահանգով, մի կողմ դնելով ամենայն տեսակի անձնական հաշիվներն ու ազգակցական կապերը, գյուղընտրական հանձնաժողովները պետք ե գործադրեն խիստ դասակարգային, անհատական մոտեցում՝ ընտրողների և ձայնազուրկների վորոշելու ժամանակ։

Նոր ընտրական հրահանգում գոյություն ունեն փոփոխություններ և լրացումներ։ Այս տարի ձայնազուրկների ցուցակների կազմելն ավելի բարդ կլինեն, քան անցյալ վերընտրությունների ժամանակ, քանի վոր կուլակի նշանները այդ ժամանակաընթացքում եյապես փոխվել ե, նա ապակուլակացված ե, նրա արտադրական նշանները ջնջվել են։ Բայց նա պահպանել ե իր շահագործական ունակությունները, վորը արտահայտվում ե գաղտնի առևտրի, սպեկուլյացիայի, գնելու և վերածախի, վաշխառության մեջ և այլն։ Այդ բոլորը խիստ կերպով պետք ե հաշվի առնվի ընտրական հանձնաժողովների կողմից։

## ԸՆՏՐԱԿԱՆ ՏԵՂԱՄԱՍԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

Հաշվետու – վերընտրական կամպանիայի և հենց վերընտրությունների անցկացնելու համար գյուղխորհրդի տեղամասը պետք է բաժանվի ընտրական տեղամասերի՝ գյուղխորհուրդ մտնող բնակելի կետերի, խոշոր խորհտնտեսությունների, կոլտնտեսությունների, արդյունաբերական հիմնարկությունների թվով, յեթե նմանները գոյություն ունեն գյուղխորհրդի տեղամասում: Դա չի բացառում մի գյուղում յերկու կամ ավելի ընտրական տեղամասեր կազմակերպել, յեթե գյուղը մեծ կամ ձըգված է, կամ յերկու-յերեք մանր, իրարու կից, չեներ մեկ ընտրական տեղամասում միացնել: Գյուղական խորհուրդների հաշվետվությունները ու վերընտրությունները ինչպես կանոն, պետք է ամեն մի ընտրական կետում տարվեն առանձին:

Գյուղական ընտրական հանձնաժողովները ամեն մի ընտրական կետում նախորոք տեղ են նշանակում, վորտեղ պետք է տեղի ունենան հաշվետվությունները ու վերընտրությունները, նույնպես և այն տեղերը, վորտեղ կախվում են վերընտրություններին նվիրված հայտարարությունները ու ծանուցումները:

Գյուղական խորհուրդները, շրջանային գործկոմները, բոլոր ընտրական հանձնաժողովները և կցվածները պետք է հաստատ հիշեն, վորքան մոտ է ազգաբնակությանը ընտրական կետը, այնքան ավելի բարձր է աշխատավորների, առանձնապես կանանց ներկա լինելու չափը, այնքան ավելի մեծ է պատվիրակների կապը ընտրողների հետ, այնքան ավելի մեծ է ձեռնարկներում, ցեխերում, բրիգադներում, կոլտնտեսություններում, խորհտնտեսություններում, ՄՏԿ և հիմնարկություններում պատգամավորների խմբեր կազմակերպելու հնարավորությունը:

## ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Այն գյուղերում, ուր կան ազգային փոքրամասնությունների խիտ խմբակներ (հայեր, ռուսներ, գերմանացիք, լեռնային հրեաներ, թաթեր, լեզգիններ և այլ.) պետք է առանձին ընտրական տեղամասեր կազմակերպվեն և ապահովեն բոլոր գործերը մայրենի, հասկանալի լեզվով տանելու: Իսկ այն կետերը, վորտեղ ազգաբնակությունը խառն է, ամբողջ կամպանիան պետք է անցկացնել զուգահեռ՝ թյուրքերեն և ռուսերեն, ռուսերեն և հայերեն և այլն լեզուներով:

Շատ կարևոր է ապահովել ընտրական հանձնաժողովներում ազգային փոքրամասնությունների ներկայացուցչությունը—համաձայն ընտրական հրահանգի հոդ. հոդ: Անհրաժեշտ է հենց հիմա ջոկել ազգային փոքրամասնությունների աշխատակիցների



հատուկ կազմ՝ շրջանների և գյուղխորհուրդների սպասարկելու համար: Միաժամանակ պետք է բոլոր միջոցները ձեռք առնել նրա համար, վորպեսզի ազգային փոքրամասնություններին մեծագույն չափով ներգրավել կամպանիայի մեջ և ապահովել նրանց ներկայացուցչությունը խորհուրդներում և գործկոմներում:

## ԳՅՈՒՂԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

Գյուղխորհրդի հաշվետվությունը կազմվում է շրջանից կցված ղեկավարությամբ՝ խորհրդի աշխատանքային ապարատով, այսինքն, նախագահը և քարտուղարը՝ խորհրդի սեկցիաների նախագահների ու պատգամավորական խմբակների ղեկավարների անպայման մասնակցությամբ:

Գյուղխորհրդի հաշվետվության կազմելում մասնակցում են. ուսուցիչները, ագրոնոմները, անասնաբույժերը, զոոտեխնիկները, բժիշկները, կոլտնտեսությունների, խորհտնտեսությունների նախագահները, անասնաբույժները, ժողդատավորները, կոոպերատորները և մյուս հիմնարկությունների ու ձեռնարկությունների աշխատակիցները, վորոնց սպասարկում է խորհուրդը, անկախ նրանից, թե վերջինները գտնվում են տվյալ կամ ուրիշ գյուղի տերիտորիայում:

Հաշվետվության նյութեր պետք է ծառայեն — հենց խորհրդի նյութերը՝ իրեն գործունեյության մասին, արձանագրությունները և վերադաս գործկոմների ու խորհրդի վերստուգիչ հանձնաժողովի կողմից հետազոտությունների նյութերը, խորհուրդների մրցությունների արդյունքները, ինչպես և գյուղխորհրդի տեղամասում գտնվող ձեռնարկների, խորհրդային կազմակերպությունների և հիմնարկությունների համառոտ նյութե-

Գյուղական խորհրդի հաշվետվությունը իր մեջ պետք է առնի խորհրդի 1931 թվից մինչև 1934 թ. գործունեությունը, այսինքն՝ խորհրդի վերջին վերընտրություններից մինչև ներկա ժամանակը: Այդ դեպքում պետք է մանրամասնորեն կանգ առնել խորհրդի 1934 թ. գործունեյության վրա:

Գյուղական խորհրդի հաշվետվությունը պետք է ընդգրկի ամբողջովին, ինչպես հենց իրեն՝ խորհրդի աշխատանքը, նույնպես և արդյունաբերական ձեռնարկների, կոլտնտեսությունների, խորհտնտեսությունների, ՄՏԿ, կոլտնտեսականների ու կոլտնտեսուհիների փոխադարձ օգնության դրամարկղի (գյուղկոմ), անասնապահական ապրանքային ֆերմաների, փորձակայանների, կոոպերացիայի, դպրոցների, խրճիթ-ընթերցարանների, ակումբների, կամավոր ընկերությունների (ՄՈՊՐ, ՊԱԶԸ-Ավիաքիմ) գյուղական դատարանի և այլն աշխատանքները:

Մասնավորապես, գյուղխորհրդի հաշվետվությունը պետք է պարտադիր կերպով իր մեջ ընդգրկի հետևյալ տեղեկությունները.

ա) Խորհրդի կողմից ընտրողների նակազի կատարման մասին.

բ) Կոլտնտեսային շինարարության մասին.

գ) Գյուղական տնտեսության դրության մասին, մասնավորապես բերքատվության բարձրացնելու, կորուստների դեմ պայքարելու և ուր. մասին.

դ) Անասնապահության զարգացման և բարձրացման համար խորհրդի կատարած աշխատանքի մասին.

ե) Պրոլետարական պետության առաջ պարտավորությունների կատարման և կոոպերացիայի ու մթերող կազմակերպությունների աշխատանքի մասին.

զ) Միջոցների գանձման մասին.

է) Սոցիալիստական սեփականության պաշտպանության և սոցիալիստական օրինականության ամրապնդման մասին.

ը) Բարեկարգման և ճանապարհային շինարարության մասին.

թ) Դպրոցական առողջապահության և հիվանդանոցային շինարարության մասին.

ժ) Տեղական արդյունաբերության զարգացմանն աջակցելու մասին.

ի) Երկրի պաշտպանունակության ամրապնդման մասին.

լ) Խորհրդի աշխատանքի վերակառուցման մասին՝ 17-րդ կուսհամագումարի որոշումների իրականացման անկյունատեսի տակ:

Այս բոլոր հարցերի շուրջը գյուղխորհուրդը հաշիվ տալով, պետք է տա կոնկրետ, սպառիչ տվյալներ իր աշխատանքի մասին:

Գյուղական խորհրդի հաշվետվությունը իր բոլոր մասերում պետք է իր մեջ արտացոլի խորհրդի դասակարգային պայքարը կազմակերպչա–մասսայական նրա աշխատանքը իր գործունեության բոլոր բնագավառներում:

Իր հաշվետվության մեջ գյուղական խորհուրդը չպետք է սահմանափակվի ձեռնարկի, կազմակերպության և հիմնարկության աշխատանքի ձևական բնութագրմամբ կամ միայն նրանցից ստացած տեղեկությունների թվարկելով, նա պարտավոր է անպայման ասել, թե ինքը ինչպես է ղեկավարել նրանց, թե խորհուրդը հատկապես ինչ է արել կոլտնտեսությունների բոլշևիկյան ամրապնդման և աճման ու կոլտնտեսականներին ունևոր դարձնելու, անասնապահության բարձրացման և զարգացման, ճանապարհային և դպրոցական շինարարության համար



մղած պայքարում, ինչ է արել գյուղի աշխատավորության կուլտուրական — կենցաղային պայմանների բարելավման, գյուղի բարեկարգության, կոոպերացիայի աշխատանքները լավացնելու, երկրի պաշտպանունակությունը ամրապնդելու համար և այլն:

Գյուղխորհրդի հաշվետվությունը նախքան գյուղխորհրդի ընտրողների քննության դնելը, պետք է կատարվի գյուղխորհրդի պլենումի նիստին: Խորհրդի հենց այդ նիստում բաշխվում են զեկուցողները՝ ընտրական տեղամասերում հաշվետվություններ տալու համար:

## ՀԱՇՎԵՏՎԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվետու կամպանիան պետք է ջերման բերի գյուղխորհրդի աշխատանքի թերությունները, նույնպես և դրական կողմերը և գործնական ուղիներ նշի թերությունների վերացման համար: Դրա համար էլ գյուղական խորհուրդը, հաշվետու ժողովին հաշիվ տալով, պարտավոր է ասել, ինչպես իր գործունեության լավ կողմերի և հաջողությունների մասին, նույնպես և բոլոր թերությունների մասին, առանց թաքցնելու և ավելացնելու այն: Դրա համար էլ գյուղական խորհուրդը և գյուղական ընտրական հանձնաժողովը պետք է շատ լայն վիճաբանություններ ծավալեն, քննության դնելով գյուղի բոլոր հարցերը, հնարավորություն տալ բոլոր ցանկացողներին արտահայտվելու, քննադատության ենթարկել, ինչպես խորհրդի գործունեությունը, նույնպես և գյուղական և վերադաս կազմակերպությունների և հիմնարկությունների գործունեությունը: Հաշվետվական ժողովների անցկացնելու ժամանակ փոքր մի շտապողականություն չի կարելի թույլ տալ — այդ ժողովների ժամանակը չի կարելի սահմանափակել վաղուց վորոշած ժամերով:

Խորհուրդների աշխատանքի քննադատությունը պետք է կենտրոնացվի նրա վրա, թե նրանք ինչպես են կատարում ընտրողների նակազները: Նոր ընտրվող խորհուրդներին տրվող նակազներում, անկասկած իրենց տեղը կգտնեն ընտրողների ցուցմունքները, թե խորհուրդները ինչպիսի խնդիրներ պետք է լուծեն տնտեսական և կուլտուր — կենցաղային շինարարության բնագավառում: Ահա ինչու նակազների քննությունը պետք է գրավել ընտրողների լայն մասսաներին: Նակազը պետք է հասկանելի և մատչելի լինի ընտրողներին, նա պետք է լինի ռեալ և իրագործելի, հաշվի առնելով նյութական միջոցներն ու հնարավորությունները:

Գյուղխորհրդի հաշվետու զեկուցումը պետք է կառուցված լինի բոլշևիկյան առողջ ինքնաքննադատության ու հարմածայնության պրակտիկ իրականացման անկյունատեսի տակ՝ խորհրդի աշխատանքի բոլոր բնագավառներում այնպես, վորպեսզի

նա ծառայի աշխատավորների լայն մասսաների հետագա մոբիլիզացիայի ու կազմակերպմանը՝ սոցիալիստական շինարարության շուրջը, 1934 թ. տնտեսական – քաղաքական պլանների կատարման նպատակին:

Հաշվետու ժողովների օրակարգի մեջ պետք է լինեն.

1. Գյուղխորհրդի գործունեության հաշվետվությունը՝ գյուղխորհրդի վերստուգիչ հանձնաժողովի կից զեկուցմով.

2. Ընտրական հրահանգի բացատրությունը (գյուղական ընտրական հանձնաժողովը կարդում է ընտրական իրավունքից ոգտվելու և զրկվելու հոդ. հոդ. և բացատրում է առանձին տեղերը):

3. Ձայնազուրկների ցուցակի նախագծի քննությունը (ցուցակը կարդում է հաշվետու – ժողովի նախագահը — գյուղական ընտրական հանձնաժողովի ներկայացուցիչը):

Կոլտնտեսությունների, խորհտնտեսությունների, կոոպերացիայի, դպրոցի, հիվանդանոցի, ժողդատարանի և միյուսների աշխատանքի մասին բացատրություն և սպառող՝ պատասխան պետք է տան պարտադիր կերպով՝ հենց հաշվետու ժողովում ներկա գտնվող այդ կազմակերպությունների ու հիմնարկությունների պատասխանատու ներկայացուցիչները:

3-րդ հարցի շուրջը հաշվետու ժողովը արտահայտում է իր կարծիքը՝ ըստ էության ճիշտ կամ անճիշտ կերպով ձայնից զրկելու մասին, ընդ որին ընտրողների կարծիքը հաշվի է առնվում ամբողջովին գյուղական ընտրական հանձնաժողովը: Հաշվետու ժողովը չի կարող ձայն տալ կամ զրկել:

Հաշվետվությունների կազմակերպելու և անցկացնելու ժամանակ խորհուրդներն ու ընտրական հանձնաժողովները պետք է ղեկավարվեն հետևյալով.

1. Հաշվետու ժողովները պետք է անցկացվեն ոչ շուտ, քան ընտրական ժողովներից 7–10 օր առաջ.

2. Գյուղական խորհուրդների և վերստուգիչ հանձնաժողովների հաշվետվություններն անց են կացվում անպայման բոլոր, առանց բացառության ընտրական տեղամասերում և մանր բնակելի կետերում, կոլտնտեսություններում, խորհտնտեսություններում, ՄՏԿ, և ընտրողների ընդհանուր ժողովներում.

3. Գյուղական խորհրդի հաշվետվությունը կատարվում է մայրենի հասկանալի լեզվով խորհրդի նախագահը կամ խորհրդի անդամը, բայց գյուղխորհրդի նախագահության հանձնարարությամբ. մինչև գյուղխորհրդի հաշվետու զեկուցումը, այս կամ այն բնակելի կետում, կոլտնտեսությունում, ՄՏԿ, նախապես հաշիվ են տալիս և իրենց ընտրողների առաջ գյուղխորհրդի անդամները խորհրդում ունեցած իրենց գործունեության մասին.



4. Պատգամավորական խմբակների անդամներն ու սեկցիայում աշխատողները հաշիվ են տալիս իրենց բրիգադներում, ցեխերում, հերթափոխություններում.

5. Հաշվետվություններից առաջ՝ գյուղական ժողովներում վերընտրությունների հարցը քննվում է կոլտնտեսականների ընդհանուր ժողովներում, այնպես, վորպեսզի հետագայում ապահովվի կոլտնտեսականների կազմակերպված յելույթը՝ հաշվետու կամպանիայում.

6. Հաշվետու (և վերընտրական) ժողովների որերին ձեռնարկներում, կոլտնտեսություններում, խորհտնտեսություններում, ՄՏԿ-ներում պետք է անցկացնել 5–10 րոպեյական թռուցիկ միտինգներ, կազմակերպել ինսցեներովկաներ՝ վորը նվիրված լինի հաշվետու – վերընտրական ժողովներին ընդհանուրի կոչին:

7. Հաշվետու ժողովների համար կազմակերպչա – տեխնիկական նախապատրաստությունը շատ մեծ նշանակություն ունի. դրա համար էլ հաշվետու ժողովները պետք է կապակցված լինեն գյուղատնտեսական ցուցահանդեսների կազմակերպման հետ, ուր կոլտնտեսությունների, անասնապահական ապրանքային, խորհտնտեսությունների սելեկցիոն կայանների և այլ. նմուշներն են ցուցադրվում, ընտրական հանձնաժողովներն ու խորհուրդները պետք է տեղ և շենք հարմարեցնեն հաշվետու ժողովի համար, վաղօրոք լայն կերպով հայտնեն ընտրողներին ժողովների վոր օրն ու վոր ժամին սկսվելու մասին, ստեղծեն հանգստավոր – գործնական պարագաներ՝ արդյունավետ աշխատանքի համար:

## ԿԱՆԱՆՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ընտրող կանանց լայնորեն, գլխավորին ներգրավումը հաշվետու – վերընտրական կամպանիայի բոլոր էտապներում պետք է լինի բոլոր գյուղխորհուրդների ու շրջանային գործկոմների, բոլոր ընտրական հանձնաժողովների ու կցվածների շատ լուրջ ուշադրության կենտրոնում:

Տղամարդ – պատգամավորների հաշվետվությունները տալու հետ միասին, պետք է լսել գյուղխորհրդի և կին պատգամավորների հաշվետվությունները և յերևան հանել բանվորուհիների և կոլտնտեսուհիների ակտիվիստկաներին:

Ամենաակտիվ մասնակցություն ունենալով հաշվետու կամպանիայում, բանվորուհիները, կոլտնտեսուհիները և աշխատավոր մենատնտեսուհիները պետք է յերևան հանեն խորհուրդների աշխատանքում բոլոր թերությունները ընդհանրապես և մասնավորապես՝ աշխատավոր կանանց պահանջների ու կարիքների սպասարկումը, նրանց [illegible] տնտեսության մեջ ներ-

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ Гос Библиотека ՀՍՍՌ Арм ССР Ա. им. А. Мясникяна

գրավելը՝ նրանց աշխատանքի համար պայմաններ ու պարագաներ ստեղծելը, կանանց խորհուրդներում և գյուղական հասարակական հիմնարկություններում և կազմակերպություններում առաջ քաշելու և գործնական աշխատանքի համար:

Խորհուրդներն ու ընտրական հանձնաժողովները մեծագույն չափով պետք ե ոգտագործեն ակտիվիստկաներին, կոմյերիտուհիներին, կոլտնտեսուհիներին ըստ ծուխերի ընտրական ծանուցագրեր հանձնելու համար:

## ՆՈՐ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ԸՆՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

Գյուղական ընտրական հանձնաժողովներն ու գյուղխորհուրդները, խորհուրդների ընտրություններից 5 որ առաջ, հատուկ ջոկած ակտիվիստների, խորհրդի անդամների, կոմյերիտականների, պիոներների, դպրոցականների, սեկցիաների ակտիվի և պատգամավորական խմբերի միջոցով հանձնեն վճռականապես բոլոր ընտրողներին ընտրական ծանուցագրերը: Ընդ վորին պետք ե հատուկ հիշել, վոր ընտրական ծանուցագրեր հանձնելը միայն գյուղխորհրդի սուրհանդակի միջոցով, նույնպես և խմբական ծանուցագրերի բաժանելը վճռականապես արգելվում ե: Անցյալ վերընտրություններում ընտանիքի անդամների ընտրական ծանուցագրերը հանձնվում էին հաճախ ընտանիքի գլխավորին. դա ներկայումս չպետք ե կրկնվի: Ընտրական ծանուցագրերը պետք ե անձամբ հանձնվի ամեն մի ընտրողին անհատապես: Հովիվներին — չոբաններին, վորոնք բինաներում և յայլաներում են գտնվում ընտրական ծանուցագրերն անպայման պիտի հանձնվեն նախորոք:

Գյուղական ընտրական հանձնաժողովներն ու գյուղխորհուրդները պետք ե հաջողեցնեն, վորպեսզի վերընտրական ժողովները սարքավորված լինեն հանդիսավոր կերպով — գործնական և անցկացվեն անպայման բոլոր ընտրողների — ինչպես տղամարդկանց, նույնպես և կանանց մասնակցությամբ:

Լուրջ ուշադրություն պետք ե դարձնել՝ մինչև ընտրությունները — մի – յերկու որ առաջ կոլտնտեսականների ընդհանուր ժողովների վրա: Նրանք պետք ե քննության առնեն տվյալ խորհրդի և վերստուգիչ հանձնաժողովի անդամների թեկնածությունները: Պետք ե այնպես անել, վոր վճռականապես թարմացվի խորհուրդը, ապահովել նրանում բանվորների, կոլտնտեսականների, կոմյերիտների, առանձնապես կանանց մեծագույն ներկայացուցչությունը, այդ դեպքում չմոռանալով, ազնիվ մենատնտեսներին — վաղվան կոլտնտեսականներին:

Պետք ե վճռականապես և վերջնականապես խորհուրդներից դուրս վռնդել կաշառակերներին, բյուրոկրատներին, յենթակուլակներին, թշնամական, այլասերված, հակակոլտնտեսային և վոչ



դիմացկուն տարրերը, վորոնք ներս են սողոսկել խորհուրդների մեջ: Խորհուրդների մեջ այլևս չպետք ե ընտրել նրանց, վորոնք անցյալ կազմի մեջ չեն աշխատել և չեն արդարացրել ընտրողների վստահությունը:

Խորհուրդների, գործկոմների և խորհուրդների համագումարի համար արժանի պատգամավորներ ընտրելու խնդիրը, վորոնք կարողանային ամեն որ բոլշևիկորեն կյանքի մեջ կիրառել կուսակցության և կառավարության դիրեկտիվները, պարտադրում ե, ինչպես յերբեք, բացառիկ ուշադրությամբ մոտենալ ամեն մի թեկնածուի անհատապես ու մանրամասն ուսումնասիրությանը: Դրա համար, վորպեսզի այդ կարելի լինի հաջողեցնել պետք ե պատգամավորների թեկնածուների ընտրության հարցերով զբաղվել հաշվետու — վերընտրական կամպանիայի հենց առաջին որերից, հատուկ ուշադրություն դարձնել ներկա կազմի ամեն մի պատգամավորի խորհրդում տարած աշխատանքի հաշվետվության գնահատականի վրա, նույնպես և սեկցիաներում և պատգամավորական խմբակներում աշխատող ակտիվի ստուգմանը: Առաջ քաշել լավագույն հարվածայիններին և հարվածայնուհիներին, բանվորուհիներին, կոլտնտեսականներին և կոլտնտեսուհիներին, ազնիվ մենատնտեսներին, առաջավոր արտադրականներին, վորոնք ընդունակ են մասսայական մասնակցություն ունենալ խորհուրդների աշխատանքի վերակառուցման և ամրապնդման գործում, կազմակերպել աշխատանքը ձեռնարկություններում, կոլտնտեսություններում, խորհտնտեսություններում, ՄՏԿ, անասնապահական ֆերմաներում, աշխատավոր մենատնտեսների շարքերում, վորոնք կարող լինեն կազմակերպիչ և նախամարտիկ լինել հասարակական — մասսայական աշխատանքներում — վերընտրական կամպանիայի հիմնական և վճռական մոմենտն ե:

Խորհուրդների անդամների ու թեկնածուների ընտրությունների հետ միաժամանակ միևնույն ժողովում պետք ե ընտրել վերստուգիչ հանձնաժողովի կազմ: Վերստուգիչ հանձնաժողովի կազմի համար բոլոր առաջադրված թեկնածությունները պետք ե մանրամասնորեն և բազմակողմանիորեն քննության առնվեն: Վերստուգիչ հանձնաժողովների կազմի մեջ պետք ե ընտրվեն դասակարգայնորեն աչալուրջ, կայուն, ազնիվ, անկաշառ անձինք, բոլշևիկյան կոփվածությամբ, աշխատավոր լայն մասսաների հատուկ վստահությունը վայելող անձինք: Վերստուգիչ հանձնաժողովների կազմի մեջ հաստատապես անհրաժեշտ ե առաջ քաշել կոմյերիտական — հարվածայիններին ու կին-ակտիվիստկաներին, վորոնք վերստուգիչ հանձնաժողովներում կլինեն, անպայման, լավ աշխատողներ:

Մեր շրջաններն ու գյուղխորհուրդները թերագնահատում

են վերստուգիչ հանձնաժողովների դերը: Բայց այն ինչ, մեր տնտեսական աճի հետ կապակցված, գյուղական բյուջեների առկայունությամբ ու ստեղծերով, խորհուրդների վերստուգիչ հանձնաժողովների դերը եվ ավելի է բարձրանում:

Խորհրդի բոլոր անդամների ընտրելուց հետո հրավիրվում է նորընտիր խորհրդի առաջին կազմակերպչական նիստը, որտեղ լսվում է գյուղական ընտրական հանձնաժողովի հաշվետվությունը և ընտրվում են՝ գյուղխորհրդի նախագահ, նախագահության անդամներ և գյուղխորհրդի քարտուղար, բնակելի կետերի համար խորհրդի լիազորներ, շրջանային խորհուրդների համագումարի պատգամավորներ՝ ընտրական հրահանգի նոր մասով:

Անցյալ վերընտրությունների փորձը ցույց տվեց, որ հակառակ ցուցմունքների, շատ տեղերում գյուղխորհրդի նախագահը ընտրվել է ոչ թե գյուղխորհրդի պլենումում, այլ դրա համար հատուկ հրավիրված նախագահության նիստում: Բոլոր խորհուրդները, ընտրական հանձնաժողովները և կցվածները հաստատ պետք է հիշեն, որ գյուղխորհրդի նախագահը պետք է ընտրվի պլենումում, այլ ոչ թե գյուղխորհրդի նախագահությունում:

Խորհուրդները — պրոլետարական դիկտատուրայի օրգաններն են: Ընթացիկ հաշվետու — վերընտրական կամպանիայից Ադրբեջանի խորհուրդները պետք է դուրս գան ավելի ամրացած, բավականաչափ թարմացած, ուժեղ՝ նրանց առաջ կանգնած 2-րդ հնգամյակի կարևոր տնտեսական — քաղաքական խնդիրների հաջող լուծման համար, իրագործելով ընկ. Ստալինի ցուցմունքը այն մասին, որ — «պրոլետարիատի ուժեղ և հզոր դիկտատուրան — ահա թե մեզ ինչ է հարկավոր հիմա նրա համար, որպեսզի փոշի դարձնենք մեռնող դասակարգերի վերջին մնացորդները և ջախջախենք նրանց գողական նենգությունները:

Բոլշևիկյան խորհուրդներն անմիջական պայմաններ են սոցիալիզմի համար հաջող պայքարի, որն ապահովելու յե հետագա ծավալուն սոցիալիստական հարձակումը:

Ադրբեջանի Կենտրոնական Գործադիր Կոմիտեյին կից կենտրոնական ընտրական հանձնաժողով:



# ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆ

## 1. ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԿԱՄՊԱՆԻԱ

| | Ժամկետներ |
|---|---|
| 1. ԱՍԽՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի կազմակերպումը. | Սեպտեմբերի 1-ից հոկտեմբերի 10-ը. |
| 2. Քաղխորհուրդների և շրջգործկոմների ընդլայնված պլենար նիստերում քաղաքային և շրջանային ընտրական հանձնաժողովների կազմակերպում: Քաղաքի, շրջանի վերընտրությունների պլանի կազմումը. | — |
| 3. Կոլտնտեսականների ժողովներ՝ նվիրված վերընտրությունների հարցերին և գյուղական ընտրական հանձնաժողովների թեկնածուների քննարկում. | |
| 4. Գյուղխորհրդի պլենարի ընդլայնված նիստ: Գյուղական ընտրական հանձնաժողովների կազմակերպում, ընտրական տեղամասերի նշանակում. | |
| 5. Հրահանգչական շրջանային խորհրդակցություններ՝ գյուղական ընտրական հանձնաժողովների հետ. քաղաքներում — տեղամասային, շրջանային ընտրական հանձնաժողովների հետ. | |
| 6. Հասակի (տարիքի) նշանների հաշվառում. ձայնազուրկների ցուցակների կազմելը. | |
| 7. Լայն մասսային ռայոնական խորհրդակցություններ ռայոններում, շրջանային կենտրոններում, որը անց է կացնում Ադրկենտգործկոմին կից կենտրոնական ընտրական հանձնաժողովը. | — |

## 2. ՀԱՇՎԵՏՈՒ ԿԱՄՊԱՆԻԱ

| | |
|---|---|
| 1. Կոլտնտեսականների, գյուղի կուսակ բջջի և հասարակական մյուս կազմակերպությունների ժողով- ների՝ նվիրված ձայնազուրկների ցու- ցակների քննության հարցերին, նոր նակազի նշելուն և հաշվետվական ժողովների նախապատրաստության. | Հոկտեմբերի 10 — 30-ը: |
| 2. Խորհուրդների պատգամավորների հաշվետվությունները բնակելի կե- տերում, կոլտնտեսություններում, բրիգադներում, ցեխերում, խորհ- տնտեսություններում, ՄՏԿ և այլ. | |
| 3. Հաշվետու ժողովներ բնակելի կե- տերում և ընտրական տեղամասե- րում. | |
| 4. Ընտրական իրավունքներից զրկված- ների ցուցակների կազմումը. | |

## 3. ՎԵՐԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| | |
|---|---|
| 1. Ձայնից զրկելու կամ ընտրական ի- րավունքի անկանոն տալու դեմ բո- ղոքների քննություն. | Նոյեմբերի 1—20-ը: |
| 2. Ընտրական ծանուցումների հանձ- նում. | |
| 3. Կոլտնտեսականների ժողովներ՝ նվ- իրված խորհուրդներին և վերստու- գիչ հանձնաժողովների թեկնածու- ների հարցերին և նոր նակազների ընդունումը. | |
| 4. Գյուղխորհուրդների վերընտրու- թյունները. | |
| 5. Շենային խորհուրդների վերընտրու- թյուն. | Նոյեմբերի 20-ից մինչև դեկտ. 10-ը |
| 6. Խորհուրդների շրջանային համագու- մարներ. | Նոյեմբերի 20-ից մինչև դեկտ. 10-ը |
| 7. Քաղխորհուրդների վերընտրություն- ներ. | Նոյեմբերի 20-ից մինչև դեկտ. 10-ը |
| 8. Նախ ՍԽՀ և Ի. Լ. Ղարաբաղի խոր- հուրդների համագումարներ. | Դեկտեմբերի 12 — 20. |
| 9. Խորհուրդների համամիութենական 7-րդ համագումարը | Դեկտեմբերի 25 — 1934 թ. |



ՊԵՏ. ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ—Арм. ССР
и. им. А. Мясникяна

ՀՀ Ազգային գրադարան
NL0218444

39.754

О подготовительной и отчетно-перевыборной кампании советов

Издание Аз ЦИК БАКУ — 1934